

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19. 10. 2015թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին՝**

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյան - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ս. Ղուբաթյանը, Ս. Խալաթյանը, Ա. Աղլոյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ .Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը -ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

**Օրակարգում՝**

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց ՝**

1. Մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Վ.Ասատրյանին, Տ.Բաղդյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին

Անհրաժեշտ ուշադրություն դարձնել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշների կատարման գործընթացին:

2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին

Անհրաժեշտ հսկողություն սահմանել հանրակրթական ուսումնական հաստատությունների և առողջապահական կազմակերպությունների կողմից ձմռան նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Խալաթյանին

Մշակել և ներկայացնել միջոցառումների ծրագիր՝ „Ուսանողության միջազգային օրվա,, կապակցությամբ:  
/Ժամկետ 10.11.15թ./

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ